ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

JOURNAL OF ORIENTAL STUDIES

№ 21

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)
Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր
Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ
Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր
Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ
Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ
Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր
Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.
Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.դ.
Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)
Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)
Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)
Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա)
Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արաբագիտություն

Գոռ Գևորգյան
ԵԳԻՊՏՈՍԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՍԻՐԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՆԿԱՏՄԱՄԲ. ԱԲԴԵԼ ՖԱԹԱՀ ԱԼ-ՍԻՍԻԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ (2013-2019) 7-17

Արամ Գասպարյան
ԱԼԺԻՐԻ ԲԵՐԲԵՐՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՇԱՐԺՈՒՄԸ (1962-1999 թթ.) 18-30

Տաթևիկ Մկրտչյան, Միքայել Հովհաննիսյան
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԱՐԱԲԱԼԵՁՈՒ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԱՅՔԵՐՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՓՈՒԼԵՐՈՒՄ (2016, 2020 ԹԹ.). ԴԻՄԿՈՒՐՄՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ 31-49

Արմինե Հակոբյան
ԱԲՈՒ ԲԱԿՐ ԱՍ-ՍՈՒԼԻԻ «ԱԽԲԱՐ ԱԼ-ՇՈՒԱՐԱ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՄՊՈԶԻՑԻԱՆ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՑԵՊՏԸ 50-65

Մոհամմեդ Հաջ Իբրահիմ
ԱԾԽԱԶՐԱԾՆԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԴԵՐԸ ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 66-78

Խադիջե Ահմադ Մեհրաբի
ՆԱԽԴԻՐՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՂՈՒՐԱՆԻ ՏԵՔՍՏՈՒՄ 79-86

Իրանագիտություն

Անուշ Ստամբոլցյան
ԻՄԱՄ ԽՈՄԵՅՆՈՒ «ՎԵԼԱՅԱԹ-Ե ՖԱՂԻՀ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԿՐՈՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 87-97

Ալեն Հայրապետյանց
ՆՈՐԱԳՅՈՒՏ DNF ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԲԱՅԱՁԵՎԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ՝ «ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ԽՈՐՀՈՒՐԴ» 98-110

Նունիկ Դարբինյան
ԻՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՂ ՄԻ ՇԱՐՔ ԱՐԱՐԱԾՆԵՐԻ ՇՈՒՐՋ 111-133

Տիգրան Չանդոյան
ՔՐԴԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԹՆԻԿ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 134-144

Թյուրքագիտություն

Կուրապյ Ուրազաևա, Վերոնիկա Ռազումովսկայա, Ալեքսանդր Սաֆարյան
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏՐԱՆՍՄԻՍԻԱՅԻ ՁԵՎ: ՂԱԶԱԽԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 145-166

Արշակ Գևորգյան
ՍՏՎԵՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻԲՐԻԴԱՅԻՆ ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ. ԹՈՒՐՔԱԿԱՆ ԽՈՐՔԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ 167-186

Մարգարիտա Կրտիկաշյան
ՏԻԳՐԱՆ ՉՈՒԽԱՋՅԱՆԻ ԴԵՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ 187-200

Սամվել Ռամազյան *
ԵՎՐՈՊԱՅՈՒ (ՖՐԱՆԿԻ) ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԷՊՈՍՆԵՐՈՒՄ 201-223

Անի Ոսկանյան
ԱԴԱՆԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՉՈՐՔ-ՄԱՐԶՊԱՆ ԳԱՎԱՌԱԿԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ 224-238

***

Ռուսլան Ցականյան
ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ (ԳԵՐԵՐԿԱՐ, ԵՐԿԱՐ, ՄԻՋԻՆ, ԿԱՐՃ ԵՎ ԳԵՐԿԱՐՃ ԹՎԱԳՐՈՒՄՆԵՐ) 239-247

Հովհաննես Խորիկյան
ԿԱՊԱԴՈՎԿԻԱՅԻ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ 248-261

CONTENT

Arabic Studies

Gor Gevorgyan
EGYPT`S POSITION ON THE SYRIAN CRISIS: DURING THE PRESIDENCY OF ABDEL FATTAH AL-SISI 7-17

Aram Gasparyan
ALGERIAN BERBERS MOVEMENT FOR THE PRESERVATION OF NATIONAL IDENTITY (1962-1999) 18-30

Tatevik Mkrtchyan, Mikayel Hovhannisyan
COVERAGE OF THE NAGORNO-KARABAKH CONFLICT IN ARABIC-LANGUAGE MEDIA DURING BOTH WAR PERIODS (2016, 2020): DISCOURSE ANALYSIS 31-49

Armine Hakobyan
COMPOSITION AND AUTHOR FUNCTION OF ABU BAKR AS-SULI'S "AKHBAR AL-SHU'ARA" 50-65

Mohammed Haj Ibrahim
THE ROLE OF HYDROCARBON RESOURCES IN THE CONTEXT OF THE SYRIAN CONFLICT 66-78

Khadije Ahmad Mehrabi
THE PROBLEM OF ALTERNATION OF PARTICLES IN THE TEXT OF THE QUR'AN 79-86

Iranian Studies

Anush Stamboltsyan
THE RELIGIOUS, HISTORICAL AND POLITICAL PRINCIPLES OF IMAM KHOMEINI'S "VELAYAT-E FAQIH" DOCTRINE 87-97

Alen Hayrapetyanc
THE INTERPRETATION OF THE "MYSTERIOUS" VERB FORM OF THE RECENTLY DISCOVERED DNF INSCRIPTION: "BLESSING OR ADVICE?" 98-110

Noonik Darbinian
SOME CREATURES FOUND IN IRANIAN FAIRY TALES AND FOLKLORE 111-133

Tigran Candoyan
ETHNO-GEOGRAPHIC BOUNDARIES OF KURDISH NATIONALISM IN THE TERRITORY OF THE REPUBLIC OF TURKEY 134-144

TurkicStudies

Urazaeva K.B., Razumovskaya V.A., Safaryan A.V
LITERARY TRANSLATION AS A TYPE OF CULTURAL TRANSMISSION IN SOCIAL TRANSFORMATIONS CONTEXT. ABOUT KAZAKH LITERATURE TRANSLATIONS INTO ARMENIAN 145-166

Arshak Gevorgyan
THE PARAPOLITICAL PERCEPTION OF THE HYBRID NETWORK STRUCTURES OF SHADOW GOVERNANCE: THE TURKISH DEEP STATE 167-186

Margarita Krtikashyan
THE ROLE OF TIGRAN CHUKHAJIAN IN THE TURKISH MUSIC SCENE 187-200

Samvel Ramazyan
THE PERSONAGE OF EUROPEAN (FRANK) IN ARMENIAN AND TURKIC EPICS 201-223

Ani Voskanyan
ABOUT THE PECULIARITIES OF ECONOMIC LIFE IN THE CHORK-MARZPAN SUB-DISTRICT, ADANA PROVINCE 224-238

***

Ruslan Tsakanyan
CHRONOLOGICAL PROBLEMS OF ASSYRIAN HISTORY (EXTRA-LONG, LONG, MIDDLE, LOW, ULTRA-LOW DATES) 239-247

Hovhannes Khorikyan
THE TERRITORY AND BOUNDARIES OF CAPPADOCIA IN ACHAEMENID PERSIA 248-261

Տաթևիկ Մկրտչյան[1]
Միքայել Հովհաննիսյան[2]

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԱՐԱԲԱԼԵԶՈՒ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԱՅՔԵՐՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՓՈՒԼԵՐՈՒՄ (2016, 2020 ԹԹ.). ԴԻՍԿՈՒՐՍՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ[3]

Բանալի բառեր՝ *Լեռնային Ղարաբաղի հակամարտություն, 2016թ. քառօրյա պատերազմ, 2020թ. 44-օրյա պատերազմ, Արցախյան պատերազմներ, արաբալեզու զանգվածային լրատվամիջոցներ:*

Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն իր երկարամյա պատմության ընթացքում և՛ այսպես կոչված խաղաղ փուլերում, և՛ հատկապես ռազմական ակտիվ գործողությունների ժամանակահատվածում երբեք չի դադարել լինել ինֆորմացիոն պատերազմի և հիբրիդային պայքարի կարևորագույն առանցք:

Ակնհայտ է, որ ինչպես ամբողջ աշխարհում այնպես էլ արաբալեզու միջավայրում 2020թ. Արցախյան պատերազմը կարևոր տեղեկատվական ազդակ էր, որից հետո այդ կոնֆլիկտի մասին սկսեցին գրել անհամեմատ ավելի շատ, քան վերջին տասնամյակում: Նման տեղեկատվական ազդակ էր նաև հանդիսացել 2016թ. ապրիլյան քառօրյա ռազմական գործողությունները[4]:

[1] ԵՊՀ արաբագիտության ամբիոնի դասախոս, էլ. փոստ՝ tmkrtchyan@ysu.am
[2] ԵՊՀ արաբագիտության ամբիոնի ասիստենտ, էլ. փոստ՝ mhovhannisyan@ysu.am
[3] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-5H223 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:
[4] Միայն Google Trends հարթակում տարբեր լեզուներով այդ թվում և արաբերենով Լեռնային Ղարաբաղ փնտրանքի արդյունքները խոսուն են տվյալների կորի ցուցիչներով. ամենից բարձրը 2020թ., իսկ դրան նախորդող բարձր ցուցանիշը 2016թ. քառօրյայի օրերի ցուցանիշն է:

Լայնամասշտաբ տեղեկատվական պատերազմը, որպես հիբրիդային պատերազմի մաս, տեղի է ունենում ինչպես հոգեբանական, այնպես էլ տեղեկատվական-տեխնիկական մակարդակներում: Սոցիալական ցանցերի զարգացման և դրանց կարևորության բարձրացմանը զուգահեռ հանրային հաղորդակցման այս գործիքներն ընդգրկվել են Լեռնային Ղարաբաղում պատերազմի շուրջ տեղեկատվական պատերազմում՝ ամբողջ աշխարհում հասարակական կարծիք ձևավորելու նպատակով:

Ընդհանրապես Հայաստանի Հանրապետության ու Արցախի անվտանգության, ինչպես նաև հայությանը, հատկապես Մերձավոր Արևելքի հայկական համայնքներին սպասվող մարտահրավերները և զարգացումներն անհրաժեշտ է ուսումնասիրել և գնահատել: Այս հետազոտության հիմնական և առաջնային նպատակն է պատասխանել այդ հարցերին արաբալեզու թվային մեդիայի բովանդակային ուսումնասիրության միջոցով:

Այս հոդվածի նպատակն է հասկանալ, թե արաբալեզու թվային և՛ տեղեկատվական, և՛ սոցիալական հարթակներում պատերազմական երկու շրջաններում ինչպիսի բովանդակություն և վեկտորներ գոյություն ունեին:

Այս հոդվածում հետազոտական հավաքագրված նյութի միայն մասնակի հատվածի վերլուծության արդյունքներն են ներկայացվում, իսկ հետագայում նախատեսվում է առավել լայնածավալ նյութի վերլուծության համար կիրառելի ծրագրերի միջոցով փորձել վերհանել ավելի մեծ դատաբազայի արդյունքներ: Այս հոդվածի շրջանակում, որպեսզի հնարավոր լինի քիչ թե շատ ամբողջական պատկեր ուրվագծել, և այս դիսկուրսները ներկայացնել որպես ներկայացուցչական, դիտարկվել են

արաբական տարբեր երկրների ամենից ընթերցվող կամ դիտվող ԶԼՄ-ներից մի քանիսը։

Ժամանակագրորեն կարելի է բաժանումը կատարել հետևյալ կերպ՝ պայմանական ասված խաղաղ կամ ոչ պատերազմական փուլեր, պատերազմական ակտիվ շրջաններ՝ մասնավորապես 2016թ. ապրիլյան քառօրյա և, հատկապես, 2020թ. ադրբեջանական լայնամասշտաբ պատերազմը։ Տեղեկատվական բազայի հավաքագրման ընթացքում պարզ դարձավ, որ բազմաթիվ կայքերի արխիվային նյութերի սահմանափակումներ կան ժամանակագրության առումով, ինչը մեզ հնարավորություն չի ընձեռում գտնել ավելի վաղ շրջանի հրապարակումներ պայմանական ասված ոչ պատերազմական փուլերի համար, սակայն, մենք այս բացը մեթոդական առումով փորձում ենք լրացնել այն դատողությամբ, որ խաղաղ պայմաններում գրված նյութերը իրենց բովանդակությամբ չեն կարող տարբերվել պատերազմական շրջանում ի հայտ եկած նյութերից, այն պատճառով, որ եթե համաշխարհային հետաքրքրությունը սևեռվում է մի վայրում, ապա նախկին բոլոր դիսկուրսները սկսում են կրկին ակտուալանալ։ Հետազոտությունն իրականացվել է մեդիա մոնիթորինգի միջոցով դիսկուրս անալիզի և/կամ թեմատիկ վերլուծության մեթոդաբանությունների կիրառմամբ։

Հետազոտության ընթացքում կազմվել է բոլոր արաբական երկրների կարևորագույն տեղեկատվական լրատվամիջոցների ցանկը, ուսումնասիրվել դրանցում Ղարաբաղյան կամ հայ-ադրբեջանական թեմայով տեղակատվությունը, իրականացվել է այդ ԶԼՄ-ների հիմնական դիսկուրսների վերլուծություն։ Այդ ուսումնասիրության ընթացքում ընտրվել է մի քանի կարևորագույն առաջատար տեղեկատվական լրատվամիջոց (ստորև կլինի լրատվամիջոցների ցանկը և դրանցում առկա նյութերի քանակը և բովանդակության վերլուծությունը), որոնցում

պատերազմական փուլերում ամենից շատ են եղել անդրադարձներ հակամարտությանը, և փորձել ենք այդ նյութի վերլուծության հիման վրա նախնական հետազոտական դրույթներ վերհանել, որոնք ծրագրի ամբողջ ընթացքում պետք է լրամշակվեն և ավելի կուռ դիսկուրսների հիմք հանդիսանան։

Ինչպես ամբողջ միջազգային տեղեկատվական դաշտը այնպես էլ արաբական մի շարք երկրներ և մուսուլմանական աշխարհն ընդհանրապես սկսում է արձագանքել Ղարաբաղյան պատերազմին հակամարտության սրացման փուլերին։ Հայաստանյան վերլուծական դաշտում առկա է մի շարք վերլուծաբանների, հետազոտական շրջանակների և լրատվամիջոցների անդրադարձը, որոնք փորձել են նաև վերլուծել և համեմատել առնվազն 2016թ. և 2020թ. պատերազմների արձագանքները և գնահատականները, որոնք ընդգծում են երկու փուլերի տարբերությունները, և հատկապես Թուրքիայի ներգրավվածության աստիճանի փոփոխությունը[5]։

Այստեղ շատ կարևոր է հիշատակել, որ Քառօրյա պատերամից հետո 2016թ. ապրիլի 14-15-ին Ստամբուլում տեղի է ունեցել Իսլամական համագործակցության կազմակերպության անդամ երկրների ղեկավարների 13-րդ գագաթնաժողովը, որտեղ ընդունված փաստաթղթի 16-րդ և 17-րդ կետերը վերաբերում էին կազմակերպության անդամների կողմից Հայաստանի Հանրապետության զորքերի ներկայության բացահայտ դատապարտմանը և Ադրբեջանի Հանրապետության տարածքների Հայաստանի Հանրապետության կողմից օկուպացիայի

[5] Կարեն Վերանյան, «Ադրբեջանը՝ ահաբեկչության օջախ. արաբական արձագանքներ», 07.10.2020, Օրբելի կենտրոն, shorturl.at/aGNWZ, Շանթ հեռուստաընկերության տաղավարում զրույց Սաքո Արեյանի հետ, «Արցախյան գոյամարտի արձագանքները արաբական և մահմեդական աշխարհում», 16.10.2020, https://www.shantnews.am/news/view/784563.html, «Արաբական աշխարհի արձագանքը Ապրիլյան պատերազմին», Սիվիլնեթի տաղավարում Բեյրութի «Ազդակ» օրաթերթի խմբագիր Շահան Գանտահարյանը, 20.04.2016, shorturl.at/jHNT5

անընդունելիությանը[6]: Սա թերևս նոր մոտեցում չէր տվյալ կազմակերպության կողմից: Սակայն ի տարբերություն 2016թ. այս մոտեցմանը՝ 2020թ. պատերազմը հենց սկզբից բացահայտեց Թուրքիայի ներգրավվածությունն այս պատերազմական գործողություններին, սկսած Սիրիայից վարձկանների ներգրավմամբ և Ադրբեջան տեղափոխմամբ, մինչև թուրքական հրամանատարների կողմից ադրբեջանական բանակի գործողությունների համակարգմամբ, ինչպես նաև թուրքական արտադրության և թուրքական ավիացիայի զինատեսակների լայնորեն կիրառմամբ: Վերջնարդյունքում Թուրքիայի կողմից մոնիտորինգային գործառույթների նպատակով՝ Լեռնային Ղարաբաղում հայտնվելով:

Պետք է շատ կարևոր և հետաքրքրական մի հարցի անդրադառնանք. որքա՞ն խորքային են արաբական տեղեկատվական հարթակներում հրապարակումները, արդյոք Լեռնային Ղարաբաղի հակամարտության, դրա ծագման և հետագա զարգացումների շուրջ գիտելիքները և իմացության մակարդակը բավարարում է առնվազն իրականությանը համապատասխանության տեսակետից, և թե ինչպես է հայտնվում այս կամ այն նյութը տվյալ տեղեկատվական հարթակում՝ միջնորդավորված միջազգային տեղակատվական ալիքներից, թե՞ արաբական տարբեր տեղեկատվական նյութերի վերարտադրությամբ, թե՞ հենց ադրբեջանական և/կամ թուրքական, բայց արաբալեզու տեղեկատվական և քարոզչական նյութերի վերարտադրության ճանապարհով: Այս տեսանկյունից հետաքրքիր է առանձին ներկայացնել, թե ինչ է ցույց տվել Ծոցի արաբական յոթ երկրների լրատվական կայքէջերի լրահոսի

[6] Final Communique of the 13th Islamic Summit Conference (Unity and Solidarity for Justice and Peace), Istanbul, Republic of Turkey, 14-15 April, 2016, https://www.oic-oci.org/docdown/?docID=14&refID=5

ուսումնասիրությունը Հայաստանի Հանրապետությանը և Լեռնային Ղարաբաղին առնչվող բովանդակությամբ. ընդհանրական կերպով կարելի է եզրահանգել, որ նշված բոլոր երկրների թե՛ միջազգային, և թե՛ տեղական լրատվական կայքէջերը ըստ ժամանակագրության և հաջորդաբար ներկայացնում են իրադարձությունների զարգացումը, ներառյալ՝ երկկողմ հարաբերություններին առնչվող նյութեր, երկկողմանի պաշտոնական հանդիպումներ/հեռախոսազրույցներ, 2020 թվականի հուլիս ամսին տեղի ունեցած հայ-ադրբեջանական մարտեր, ԼՂ 44-օրյա պատերազմ, որը, թերևս, ամենաշատ քննարկված և գերակշիռ մաս կազմող թեման է:

Փորձենք թվերով ներկայացնել Ծոցի երկրներին պատկանող ընտրված լրատվականների ցուցանիշները: *Կատարական Սպուտնիկ* լրատվականը[7] կատարել է 430 հրապարակում, սաուդական *Շարկ ալ-Առսատ* լրատվականը[8] արել է 66 հրապարակում, Քուվեյթական *ալ-Ռայ Մեդիան*[9]՝ 47 հրապարակում, կատարական *Ջարիդա ալ-Շարկ* լրատվականը[10] կատարել է մոտ 30 հրապարակում, իրաքյան *ՆահրեյնՆեթ* լրատվականը[11] կատարել է 11 հրապարակում: Այս թեմաներով հրապարակումներն, ըստ էության, չեզոք բնույթի են, քանզի բացառությամբ մի քանի կոշտ հրապարակումների՝ ուղղված հավասարապես թե՛ Հայաստանի, և թե՛ Ադրբեջանի կամ Թուրքիայի դեմ, ներկայացնում են իրադարձությունների ընթացքը, սակայն ԼՂ-ի հետ կապված տեղեկատվության մեծ մասը մեղմ ասած չի համապատասխանում իրականությանը: Ինչպես վերը արդեն նշվել է, սա կարելի վերագրել երկու հանգամանքի.

[7] وكالة الأنباء القطرية (Sputnik Arabic (sputniknews.com) -
[8] الشرق الأوسط | أخبار دولية وعربية (aawsat.com)
[9] الراي - الصفحة الرئيسية (alraimedia.com)
[10] جريدة الشرق (al-sharq.com)
[11] شبكة نهرين نت الاخبارية – شبكة نهرين نت الاخبارية (nahrainnet.net)

առաջինն այն է, որ արաբական լրատվական կայքէջերում և մասնավորապես հենց Ծոցի երկրներում, որտեղ ավանդաբար չկան նաև հայ համայնքների ազդեցություն և ներգրավվածություն։ Ծոցի լրատվական կայքերում շրջանառվող հրապարակումները միջնորդավորված բնույթ են կրում և դրանց հիմնական աղբյուրները հանդիսանում են մուսուլմանական շրջանակների կողմից արված հրապարակումները, միայն մուսուլմանական սոլիդարության և միասնության գաղափարը հիմքում դնելով, ուստի բնական է, որ տեղեկատվությունը կլինի արդեն իսկ ոչ չեզոք և կողմնակալ, և դա էլ արդեն բնականորեն կարող է սխալ պատկեր ստեղծել լայն հասարակության շրջանում տվյալ հակամարտության վերաբերյալ։ Երկրորդ հանգամանքն արդեն մասնակիորեն հիշատակվեց. դա հայ ավանդական ներկայության և ազդեցությունների բացակայությունն է, և չնայած կառավարական և դիվանագիտական առկա երկկողմ հարաբերություններին, այնուամենայնիվ արաբ ժողովրդի ստվար զանգվածը և հատկապես Ծոցի երկրներում ժողովուրդն ընդհանուր առմամբ իրազեկված չէ կոնֆլիկտի մասին, և ամենից տարածված մոտեցումը, այնուամենայնիվ, մնում է երկու երկրների՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև Ադրբեջանին պատկանող մարզի շուրջ ընթացող կոնֆլիկտ։

Ծոցի երկրներից բացի այս հոդվածի շրջանակներում ներկայացնում ենք նաև երկու արաբական կարևոր երկրների՝ Եգիպտոսի և Սիրիայի տեղեկատվական հարթակներից որոշ տվյալներ։

Եգիպտական *Ալ-Մասրի ալ-Յում* կայքը[12] 2016թ քառօրյա պատերազմի ընթացքում հրապարակել է 5 նյութ, իսկ 44-օրյա պատերազմի ընթացքում կատարել է 42 հրապարակում, որոնցից

[12] المصري اليوم. https://www.almasryalyoum.com/

մի քանիսի վերնագրերը կարող են հետաքրքրական լինել բովանդակության վերլուծության համար՝

- *20 «հայ-ադրբեջանական» արկ է ընկել իրանական գյուղերի վրա... իսկ Թեհրանը զգուշացնում է:*
- *Հայկական հետախուզությունը հաստատում է թուրք զինյալների և վարձկանների մասնակցությունը Ղարաբաղում:*
- *Միրիացի երիտասարդը Հայաստանի և Ադրբեջանի միջև կրակի գծում. Թուրքիան մեզ պատերազմ է ուղարկել ամսական 2000 դոլարի դիմաց:*
- *Զոհեր ունենալուց հետո Հայաստանը հայտարարում է ադրբեջանական բանակից 11 զրահատեխնիկայի և այլ տեխնիկայի առգրավման մասին:*
- *Հայաստանը Թուրքիային պատասխանատու է համարում Ադրբեջանի հետ վերսկսված մարտերի համար:*
- *Ադրբեջանի նախագահ. Երկխոսությունն է լուծումը. մենք վարձկաններ չունենք:*
- *Ադրբեջանի և Հայաստանի միջև հակամարտությունը շարունակվում է «Ղարաբաղի» շուրջ... Ո՞ւր հասավ գործը:*
- *Հայաստան. Մզկիթները մեր ժառանգության մի մասն են, և մենք դրանք վերականգնում ենք այնպես, ինչպես եկեղեցիները:*

Ալ-յոմ ալ-Սաբի՛ եգիպտական հարթակը[13] 40 հրապարակում է արել 44-օրյա պատերազմի ընթացքում, դրանցից մի քանիսի վերնագրերը և թեմաները ստորև՝

- *Կրեմլ. Թուրքիայի ռազմական միջամտությունը Լեռնային հակամարտությանը հավասարազոր է կրակի վրա յուղ լցնելուն:*
- *Անվտանգության խորհուրդը կոչ է անում «անհապաղ դադարեցնել մարտերը» Լեռնային Ղարաբաղում:*
- *Պուտինն ու Մակրոնը կոչ են անում «անհապաղ դադարեցնել մարտերը» Լեռնային Ղարաբաղում:*
- *Ադրբեջանը Հայաստանում սպանել է 54 Լեռնային Ղարաբաղի զինվորի:*

[13] اليوم السابع. https://www.youm7.com/

- *Ադրբեջանը հերքում է Լեռնային Ղարաբաղում հայկական տաճարի ռմբակոծումը:*
- *Բահրեյնը ողջունում է Ադրբեջանի և Հայաստանի միջև հրադադարի որոշումը:*
- *Ռուսաստան. Լեռնային Ղարաբաղում հակամարտությունը ռազմական լուծում չունի:*

Այս հոդվածի համար առանձնացվել է Սիրիայի տեղեկատվական աղբյուրների ցանկից https://www.sana.sy/, https://www.alarabiya.net/ կայքերի հրապարակումները. *Սիրիական Սանա գործակալության*[14] կողմից 2016 թվականի 4-օրյա պատերազմի ժամանակ 3 հրապարակում է իրականացվել, վերնագրերը և թեմաները՝ ստորև.

- *Մինսկի խումբը լուծում է փնտրում Հայաստանի և Ադրբեջանի միջև Լեռնային Ղարաբաղի շուրջ կոնֆլիկտի լուծման համար:*
- *Լեռնային Ղարաբաղի շրջանում շարունակվում են ընդհատվող բախումները:*
- *Հայաստանի պաշտպանության նախարարություն. Ադրբեջանը վերսկսել է ռմբակոծել Լեռնային Ղարաբաղի շրջանը՝ չնայած ռազմական գործողությունների դադարեցման մասին հայտարարությանը:*

Իսկ 44-օրյա պատերազի ընթացքում սիրիական *Ալարաբիյա*[15] կայքում հրապարակվել է մոտ 200 նյութ, ստորև մի քանիսի բովանդակային թեմաները.

- *Ամբողջ գիշեր մարտեր Հայաստանի և Ադրբեջանի միջև.. տասնյակ զոհեր:*
- *Հայաստանը կոչ է անում միջամտել Ադրբեջանին.. և Բաքուն. մենք ազգային պատերազմ ենք վարում:*
- *1500 դոլարով.. Թուրքիան սիրիացի վարձկաններին մղում է Ադրբեջան:*

[14] الوكالة العربية السورية للأنباء سانا /https://www.sana.sy

[15] وأهم أخبار سوريا ومستجدات الشأن السوري | العربية أخر-https://www.alarabiya.net/arab-and-world/syria

- *Թուրք ընդդիմադիր պատգամավոր. Թուրքիան միակ երկիրն է, որ աջակցում է պատերազմին:*
- *Հայաստան. Մենք ուսումնասիրում ենք Լեռնային Ղարաբաղի անկախությունը պաշտոնապես ճանաչելու հնարավորությունը:*
- *Փաստացի պատերազմ.. Լեռնային Ղարաբաղը հաստատում է, որ «հրադադարից առաջ երկխոսություն չկա»:*
- *Անկարան և կրկին վարձկանները. Ռուսաստան. Մենք համոզված ենք դրանում:*
- *Հայաստանը փաստերով հաստատում է. Թուրքիան ահաբեկիչներ է ուղարկում Ղարաբաղ:*
- *Ադրբեջան. Հայաստանի ներսում թիրախներ ենք ոչնչացնելու... իսկ Թուրքիան «դատապարտում» է վերջինիս պահվածքը:*
- *Լեռնային Ղարաբաղի համար մարտերը սրվում են, և ՆԱՏՕ-ն կոչ է անում դադարեցնել կրակը:*
- *Եվրախորհրդարանը զգուշացնում է. Թուրքիայի դերը տարածաշրջանային հակամարտություններում մտահոգիչ է:*
- *Կովկասյան հրդեհը անհանգստացնում է Եվրոպային.. Հանգստության կոչ:*
- *Հայկական ուժերը հայտարարում են հարավային ճակատում 3 անօդաչու թռչող սարք խոցելու մասին:*
- *Թուրքիայի պաշտպանության նախարար. Ադրբեջանում գործողությունները չեն դադարի մինչև հայկական օկուպացիայի դադարեցումը:*
- *Փխրուն զինադադար Լեռնային Ղարաբաղում և Ադրբեջանում. ժամանակավոր՝ միայն դիակների փոխանակման համար:*
- *Պուտինը Էրդողանին հայտնում է իր անհանգստության մասին՝ կապված վարձկանների Լեռնային Ղարաբաղ տեղափոխելու հետ:*
- *Աղբյուրներ. Թուրքիային հավատարիմ սիրիացիները փախել են Ղարաբաղում տեղի ունեցող մարտերից:*
- *Թուրքիան հակասում է Ռուսաստանին. մենք չենք ենթարկվի Ղարաբաղում կատարվածին:*

Հիշենք նաև արաբական երկրներից Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադը առաջինն էր, որ դեռ 44-օրյա պատերազմի

ընթացքում Ռիա Նովոստիին տված հարցազրույցի ժամանակ անդրադարձավ տարբեր տարածաշրջաններում Թուրքիայի ահաբեկչական գործունեությանը, այդ թվում և Արցախի դեմ Ադրբեջանի պատերազմին. «Էրդողանը աջակցել է ահաբեկիչներին Սիրիայում, Լիբիայում: Նա է Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի և Հայաստանի միջև վերջին բախումների գլխավոր հրահրողն ու նախաձեռնողը: Էրդողանի վարքագիծը վտանգավոր է տարբեր պատճառներով. առաջին հերթին այն արտացոլում է «Մուսուլման եղբայրներ» ծայրահեղ ահաբեկչական խմբավորման մոտեցումը, երկրորդ՝ Էրդողանը պատերազմներ է հրահրում տարբեր տարածաշրջաններում՝ շեղելու հանրության ուշադրությունը Թուրքիայի ներքին խնդիրներից, և առաջին հերթին՝ Սիրիայում «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորման հետ իր՝ մեծ աղմուկ բարձրացրած կապերից: Սա է Էրդողանի նպատակը, ինչը և վտանգավոր է: Թուրքիան օգտագործում է տարբեր երկրներից Սիրիա եկած ահաբեկիչներին, այդ թվում՝ Լիբիայում: Կարող ենք վստահաբար ասել, որ Թուրքիան սիրիացի և այլ ազգության ահաբեկիչներին օգտագործում է Լեռնային Ղարաբաղում»[16]: Հասկանալի է, թե ինչու հենց Սիրիան էր, որ արաբական երկրներից առաջինը արձագանքեց պաշտոնական մակարդակում Թուրքիայի կողմից վարձկանների ուղարկելու հաստատմանը, թեև պետք է նշել, որ արդեն ռուսական, ֆրանսիական հետախուզության տվյալներով դրանք արդեն բարձրաձայնվել էին նաև Ֆրանսիայի և Ռուսաստանի կողմից:

Եգիպտոսի առնչությամբ կրկին կարող ենք խոսել Թուրքիայի դեմ կոալիցիա ստեղծելու հարցում բարձրաձայնված

[16] Асад заявил, что боевики из Сирии перебрасываются в Карабах https://ria.ru/20201006/karabakh-1578360646.html, Асад назвал Эрдогана инициатором конфликта в Карабахе, https://ria.ru/20201006/karabakh-1578356443.html

անհրաժեշտության մասին. «Վերջին երկու տասնամյակում արաբական երկրների հետ Թուրքիայի տնտեսական կապերը աճել են ինչպես առևտրաշրջանառության, այնպես էլ ներդրումային հոսքերի ու զբոսաշրջության ոլորտներում: Իհարկե, արաբական պետությունները Թուրքիայի հիմնական տնտեսական գործընկերը չեն, և կայունության պայմաններում պատասխան գործողությունները կարող են սահմանափակ ազդեցություն ունենալ Թուրքիայի տնտեսության վրա: Սակայն արաբական երկրների տնտեսական արդյունավետ հակազդեցությունը, Թուրքիայի ներկայիս տնտեսական խնդիրների պայմաններում, երբ արժեզրկվում է թուրքական լիրան, Թուրքիայից հեռանում են օտարերկրյա ներդրողները, կարող է մեծ վնասներ հասցնել»[17]: Նման քաղաքականություն մենք տեսել ենք նաև տարբեր ժամանակահատվածներում նաև Սաուդյան Արաբիայի կողմից: Վերջում կարող ենք նաև համառոտ կերպով անդրադառնալ Արաբական պետությունների լիգայի արձագանքին Արցախյան երկրորդ պատերազմի ժամանակ Թուրքիայի ներգրավվածությանը՝ որպես հակազդեցություն դիտելու տեսանկյունից: Հոկտեմբերի 5-ին Արաբական պետությունների լիգայի գլխավոր քարտուղար Ահմեդ Աբուլ Ղեյտը հայտարարեց, որ Կովկասյան և Միջերկրածովյան տարածաշրջաններում լարվածությունը խորացնելու գործում Թուրքիայի դերակատարությունը վատ հետևանքներ է ունենալու այդ երկրի համար. «Թուրքիան բախվում է տարածաշրջանային խաղացողների ու գերտերությունների հետ, ինչը վատ է վերջանալու Թուրքիայի և նրա ղեկավարության համար: Թուրքիայի նախագահ Էրդողանը ռազմական տեսանկյունից

[17] Mustafa Sonmez, *How much damage can Arab states do to Turkish economy*?, 01. Oct. 2020, Al-Monitor, https://www.al-monitor.com/originals/2020/10/turkey-egypt-saudi-arabia-launch-covert-boycott-turkish-good.html.

միջամտում է Եգիպտոսի, Սիրիայի, Իրաքի և Լիբիայի ներքին գործերին. Էրդողանը նաև միջամտել է Կովկասում Ադրբեջանի ու Հայաստանի միջև բախումներում: Անկարան առճակատվել է Հունաստանի ու Կիպրոսի հետ և ագրեսիա իրականացրել Արևելյան Միջերկրածովի գազային հանքավայրերի ուղղությամբ, ինչը ստիպեց Ֆրանսիայի պես խոշոր ու ազդեցիկ պետությանը կործանիչներ ու ավիակիր ուղարկել Կիպրոս»[18]: Արաբական պետությունների լիգայի գլխավոր քարտուղարը նաև վերահաստատում է Արցախի դեմ ռազմական գործողություններին ահաբեկչական խմբերի ներգրավման մասին փաստերը. «Ինձ զայրացնում է, որ սիրիացի գրոհայինները Ադրբեջանի հետ կռվում են Հայաստանի դեմ. չափազանց մտահոգիչ է, որ Էրդողանը օգտագործում է սիրիացի վարձկաններին այն դեպքերում, որոնք առնչություն չունեն Թուրքիայի հետ»[19]:

Արաբական լրատվամիջոցների տեղեկատվական հոսքերի մշտադիտարկումը ցույց տալիս, որ պատերազմի սկզբնական փուլում ինչպես ամբողջ միջազգային մամուլը այնպես էլ արաբականը ունենում էր ամենօրյա կտրվածքով հրապարակումներ, սակայն արդեն հոկտեմբերի կեսերից սկսած և որքան ավելի երկարաձգվում էր պատերազմն, այնքան միջազգային արձագանքները և մեդիափորձագիտական շրջանակները մի կողմից կորցնում էին հետաքրքրությունը, մյուս կողմից նոր իրադարձություններ չլինելու դեպքում սկսում էին սպասողական դիրքորոշում որդեգրել և փորձել տեսնել, թե ինչպես է ավարտվելու ռազմական բախումների հետևյալ փուլը: Մյուս կողմից այս պասիվության պատճառներից կարող է լինել

[18] Arab League Chief: Turkish Tensions “will not end well”, 04.10.2020, Arabnews, https://www.arabnews.com/node/1744121/middle-east.
[19] Նույն տեղում:

նաև մի կողմից նյութերի միջնորդավորված հրապարակումները, նկատենք, որ սկզբնական շրջանում ակտիվ լուսաբանում էր նաև միջազգային մամուլը, իսկ հետագայում օրինաչափորեն նկատվեց պասիվություն, մյուս կողմից արաբական տեղեկատվական հարթակներում տեղեկացված մասնագետների առկայության խնդիրը, որոնք կկարողանային սեփական գիտելիքների հիման վրա կատարել վերլուծություններ Լեռնային Ղարաբաղի հակամարտության մասին:

Արաբալեզու մեդիայի մշտադիտարկումը նաև դուրս է բերում ևս մեկ խոսույթ, որը ներկայացնում է Արցախյան հակամարտությունը՝ որպես կրոնական հակամարտություն քրիստոնյա հայերի և մուսուլման ադրբեջանցիների միջև:

Պատերազմի թեժ փուլում՝ համացանցում տարածվել էր կարճ տեսագրություն, որտեղ մի շեյխ քարոզ է կատարում հավաքված բազմությանը, որ իսլամական համայնքը՝ ումման, այսօր փորձության առաջ է կանգնել թե՛ արևելքում, թե՛ արևմուտքում, իսկ Ադրբեջանում ընթացող կռիվը պետք է ընդունել Շամում տեղի ունեցող կռվի պես: Այն պահին, երբ շեյխը փորձում է ֆեթվաներից խոսել, տեսագրությունն ընդհատվում էր: Հոկտեմբերի 8-ին սիրական STEP News լրատվական կայքը (stepagency-sy.net) հոդված էր հրապարակել[20], որում ներկայացրել էր նշված տեսագրության ամբողջական տարբերակը, ինչպես նաև մանրամասներ էր հաղորդել շեյխի և հավաքույթի անցկացման վայրի մասին: Ստորև ներկայացվում է մի քանի թեզ, որոնք առաջ էր քաշել շեյխն իր ելույթում: Թեզերը մի քանիսն էին, որոնք կարելի է ներկայացնել հետևյալ հերթականությամբ՝

 Այլ երկրներ ռազմական գործողություններին մասնակցելու արգելքի մասին ֆեթվայի հիշատակում: Շեյխը նշում է, որ օրեր

[20] بالفيديو|| مُفتي بما يسمى "الجيش الوطني": "الجهاد في أذربيجان فرض كفاية والقتال هناك ضد الصليبيين .08.10, " 2020, shorturl.at/arS24

առաջ երբ նա եղել է իսլամական կալվածքների և ֆեթվաների հարցերով զբաղվող գերատեսչությունում, նրան հարց են տվել, թե որն է դեպի Ադրբեջան և Լիբիա ուղևորվող (الأبناء الذين يمّموا وجوههم شطر أذربيجان وليبيا) իրենց հայրենակիցներին վերաբերող կրոնական կարգավորումը: Շեյխը չնայած ընդունելով այն հանգամանքը, որ իրենք պայքարում են «խաչակիրների» դեմ՝ հիշելով Ջորջ Բուշի՝ տարիներ առաջ հնչեցրած խոսքն այն մասին, որ պայքարը ահաբեկիչների դեմ մի նոր «խաչակրաց արշավանք է, այնուամենայնիվ, պատասխանել է, որ ընդհանուր առմամբ ֆեթվան արգելում է ռազմական գործողություններին մասնակցելու համար այլ երկիր գնալը, քանի որ դա նշանակում է բոլոր մուսուլմանների համար նախատեսված պարտականություններից (անհատական պատասխանատվություն) (فرض العين) դեպի հավաքական՝ համայնքի համար սահմանված պարտականություններ (فرض الكفاية): Որպես անհատական պարտականություն ենթադրվում են Սիրիայում ընթացող ռազմական գործողությունները, որոնց մասնակցելը յուրաքանչյուրի պարտքն է, իսկ երկրորդ տիպի՝ հավաքական պարտականությունների տակ ենթադրվում է Ադրբեջան, Լիբիա կամ այլ երկիր գնալը՝ ռազմական գործողություններին մասնակցելու, ինչը պարտադիր չէ **բոլորին**, քանի որ խոսքը չի գնում իրենց հայրենիքի մասին և եթե ինչ-որ քանակ արդեն գնացել է, ապա պարտադիր չէ, որ բոլորը գնան:

 Իսլամական աշխարհի միասնության ակնարկ. Շեյխը չնայած վերն իր ջիհադի մասին ասվածին, հիշատակում է, որ իսլամը սահմաններ չունի (بلاد الإسلام لا يحدها حدود)՝ ակնարկելով «իսլամական աշխարհի» ենթադրյալ միասնականությունը:

 Ադրբեջանցու ձայնային հաղորդագրության՝ «Մեր պատերազմը Ադրբեջանում իր նշանակությամբ ոչ մի կերպ չի զիջում ձեր պատերազմին Շամում» հիշատակում:

 Ադրբեջանը սուննի պետություն. Շեյխը շարունակում է իր խոսքը և հայտարարում է, որ Ադրբեջանը սուննի պետություն է, դավանում է սուննիականություն, իսկ այնտեղի մուսուլմանները շիա են դարձել սրի սպառնալիքի տակ՝ նշելով, որ Ադրբեջանի բնակչության 50%-ը շիա է, իսկ մյուս 50%-ը՝ սուննի:

Եվ վերջում Շեյխը եզրափակում է իր խոսքը՝ վերահաստատելով, որ լինի Ադրբեջանում, Լիբիայում, արևմուտքում, թե՛ արևելքում մուսուլմանների պայքարը կրոնական պայքար է (معركة الدين):

Սրան զուգահեռ մենք կարող ենք տեսնել Յութուբյան ալիքներից մեկում վերոնշյալ շեյխին լրիվ հակասող այնպիսի տեսակետ, որը կարծես արգելում է Սիրիայում թողնել պայքարը և մեկնել Ադրբեջան: YouTube-ի "وتزودوا" ալիքում, ինչպես նաև որոշ այլ կայքերում անգլերեն և արաբերեն տարածվել էր շեյխ Աբու ալ-Յակզան ալ-Միսրիի ձայնագրությունը՝ Ադրբեջանում կռիվներին մասնակցելու մեկնած վարձկանների մասին[21]: Տեսանյութում շեյխն՝ ի պատասխան այն հարցին, թե արդյոք Ադրբեջան մեկնած վարձկանները Հայաստանի դեմ կռիվներին մասնակցելով ջիհադ՝ սրբազան պատերազմ են մղում, պատասխանել է, որ ջիհադը պետք է արվի հանուն Ալլահի և նրա անվան մեծարման: Գումարի դիմաց ջիհադ կատարելը չի կարող լինել ընդունելի: Շեյխը նշել է, որ Սիրիայում մղվող պատերազմին մասնակցելը համարվում է ջիհադ և արվում է հանուն Ալլահի, քանի որ թշնամին հյուսիսից փորձում է գրավել երկրի շրջանները, և կան մի շարք գերիներ, ապաստարաններում թաքնվածներ, փախստականներ և բանտարկվածներ, ովքեր Ալլահից աղաչում են, որպեսզի այս իրավիճակին վերջը դրվի: Այդ պատճառով Սիրիայում ընթացող պատերազմին մասնակցելը սիրիացիների սրբազան պարտքն է,

[21] #أذربيجان حكم المشاركة في القتال في أذربيجان26 ,., 09.2020
https://www.youtube.com/watch?v=9_XhjkUMMpk

հետևաբար թողնել հայրենիքը և գնալ Ադրբեջան կռվելու համարվում է մեծագույն մեղք[22]:

Ընդհանուր առմամբ փորձելով ընդհանրական կերպով ներկայացնել արաբական մամուլում շրջանառվող բովանդակությունը կարելի է եզրակացնել, որ

ա) դիսկուրսների մեծ մասը կրկնօրինակում էր արևմտյան մամուլում շրջանառվող թեզերը,

բ) միևնույն ժամանակ լուրերի, հոդվածների և վերլուծականների մեջ առկա էին ոչ միանշանակություն պարունակող նյութեր, և հնարավոր էր տեսնել պրոհայկական, պրոադրբեջանական, մեծամասամբ նաև չեզոք հրապարակումներ՝ կախված նրանից, թե ինչ աղբյուրից էր միջնորդավորված նյութի հրապարակումը,

գ) Թուրքիան որպես այս հակամարտության ռազմական լուծման հիմնական շարժիչ ուժ: Թուրքիան, երբեմն Ռուսաստանի հետ համատեղ, ներկայացվում էր հարավկովկասյան այս պատերազմական ճարտարապետության և տարածաշրջանային իրողությունների փոփոխության նախաձեռնության հետևում կանգնած ուժ և դրա ամենից կարևոր շահառուներից մեկը, ի տարբերություն 2016թ., երբ Թուրքիայի ներգրավվածությունը կարծես միայն վերբալ մակարդակում էր տեղի ունենում,

դ) հաջորդ կարևոր դիսկուրսը՝ Սիրիայից թուրքական կողմից դեպի Լեռնային Ղարաբաղ վարձկանների ներգրավման և տեղափոխման հարցն էր, դրա շուրջ քննարկումները և նյութերի հրապարակումը և՛ մամուլում, և՛ հատկապես թվիթերյան էջերում: Պետք է նշել, որ վարձկաններին առնչվող նյութերը մի ստվար զանգված են ներկայացնում:

ե) Հակամարտությունը ներկայացվում է որպես մուսուլմանների և քրիստոնյաների միջև պայքար: Իսկ արդեն կրոնական այս կամ այն խմբավորման ինքնության ուսումնասիրությունն էլ թույլ է

[22] Նույն տեղում:

տալիս կատարել հետևյալ եզրահանգումը, որ պրոթուրքական կամ թուրքական կրոնական, քաղաքական և/կամ տնտեսական ազդեցության ներքո գտնվող ցանցի մաս կազմող կրոնական գործիչները և խմբավորումներն են, որ հակահայկական/հակաքրիստոնեական լույսի ներքո են ներկայացնում այս հակամարտությունը, և դրանում մուսուլմանների մասնակցության հարցի քննարկում և նաև քարոզչություն են իրականացնում:

COVERAGE OF THE NAGORNO-KARABAKH CONFLICT IN ARABIC-LANGUAGE MEDIA DURING BOTH WAR PERIODS (2016, 2020): DISCOURSE ANALYSIS

Tatevik Mkrtchyan, Mikayel Hovhannisyan

(Summary)

The Nagorno-Karabakh conflict during its history, both in the so-called peaceful stages and especially in the period of active military operations in 2016 and 2020, has never ceased to be the most important axis of information and hybrid wars.

It is evident, that both in the whole world and in the Arabic-speaking environment 2020 Artsakh war was an important information trigger, after which much more was written than in the last decade.

This article aims to understand what kind of content and vectors during both war periods existed in the Arabic social and information platforms.

The overall analysis shows that the Arabic-language media view the Nagorno-Karabakh conflict from a neutral point of view, but due to the Islamic solidarity and influences is seen as more pro-Azerbaijani and gains the perception of being a religious conflict.

ОСВЕЩЕНИЕ НАГОРНО-КАРАБАХСКОГО КОНФЛИКТА В АРАБОЯЗЫЧНЫХ СМИ В ПЕРИОД ВОЙН 2016 И 2020: ДИСКУРС АНАЛИЗ

Татевик Мкртчян, Микаел Ованнисян

(Резюме)

Нагорно-Карабахский конфликт на протяжении своей истории, и в так называемых мирных стадиях, и во время активных боевых действий в 2016 и 2020 годах, никогда не переставал быть важнейшей осью информационных и гибридных войн.

Очевидно, что как во всем мире, так и в арабоязычной среде Арцахская война 2020 года стала важным информационным триггером, после которого было написано гораздо больше, чем за последнее десятилетие.

В статье рассматриваются контент и векторы в арабских социальных и информационных платформах в периоды войны.

Общий анализ показывает, что арабоязычные СМИ рассматривают Нагорно-Карабахский конфликт с нейтральной точки зрения, но из-за исламской солидарности и влияния становится более про-азербайджанским и воспринимается как религиозный конфликт.